ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՆՎԻՐՎԱԾ ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 50-ԱՄՅԱԿԻՆ

2021 թ.-ի հունիսի 24-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի կլոր դահլիճում կայացավ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի հիմնադրման 50-ամյակին նվիրված «Արևելագիտության արդի հիմնախնդիրներ» խորագրով հոբելյանական միջազգային գիտաժողով, որը կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը:

Գիտաժողովին ներկա էին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի առաջատար հետազոտողներ, վերլուծական տարբեր կենտրոնների հետազոտողներ, ՀՀ գիտական, ուսումնական, գիտահետազոտական տարբեր հաստատությունների մասնագետներ, ինչպիսիք են ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Պավել Ավետիսյանը, ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի նախկին դեկան, պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանը, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն, պ.գ.դ. Հարություն Մարությանը, Մատենադարանի տնօրեն, պ.գ.դ. Վահան Տեր-Ղևոնդյանը, Թունիսում ՀՀ դեսպան Արշակ Փոլադյանը, ԻԻՀ դասպանության մշակույթի կենտրոնի տնօրեն Հոսեին Թաբաթաբաին, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն Արմեն Սարգսյանը և այլոք:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը: Ողջույնի խոսք հղեցին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը և ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն պ.գ.թ. Ռոբերտ Ղազարյանը:

Իր խոսքում Արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռոբերտ Ղազարյանը շեշտեց, որ Հայաստանը կազմում է արևելքի մաս, հավելելով՝ «մենք արևելքի ժողովուրդ ենք և պարտավոր ենք լավ ուսումնասիրել արևելքը և արևելքի ժողովուրդներին»: Նա ընդգծեց նաև միջազգային գիտական կառույցների հետ կապեր հաստատելու կարևորությունն ու

անհրաժեշտությունը արևելագիտության նկատմամբ հայագիտական մոտեցումները արտահանելու և տարածելու տեսանկյունից:

Ելույթով հանդես եկան ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի նախկին տնօրեններ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Նիկոլայ Հովհաննիսյանը և ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը:

Գիտաժողովի ընթացքում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ վաստակագրերի, պատվոգրերի և Արևելագիտության ինստիտուտի շնորհակալագրերի հանձնում:

Զեկուցումներով հանդես եկան՝ ՌԴ ԳԱ Հեռավոր արևելքի ինստիտուտի տնօրեն, պ.գ.դ. Ալեքսեյ Մասլովը «Քննարկումներ արևելագիտության զարգացման ուղիների մասին, դասականի և նորարարությունների միջև» թեմայով, ՌԴ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի փոխտնօրեն, պ.գ.թ. Ալեքսանդր Սկակովը «Ռուսաստանյան հնագիտությունը Կովկասում 21-րդ դարի սկզբին» զեկույցով, Կոռնելի Կեկելիձեի անվան Վրաստանի ձեռագրերի ազգային կենտրոնի ավագ գիտաշխատող, պ.գ.դ. Խաթունա Գափրինդաշվիլին «Հայսմավուրքի կառուցվածքը և առանձնահատկությունները» թեմայով, ՌԴ Կուբանի համալսարանի ռեկտորի առաջին տեղակալ, սոց.գ.դ. Թեմիր Խագուրովը «Երիտասարդությունը համաշխարհային և տեղական բազմաէթնիկ հանրույթում. սոցիալական լարվածության նոր դիտանկյուններ» թեմայով, ՀՀ ԳԱԱ ԱԻ Արևելյան աղբյուրագիտության և պատմագրության բաժնի վարիչ, պ.գ.դ. Ազատ Բոզոյանը «Հայոց եկեղեցին Տիեզերական եկեղեցու նվիրապետական համակարգում և այբուբենի ստեղծման նշանակությունը» թեմայով:

Ելույթներով հանդես եկան նաև ՀՀ ԳԱԱ ԱԻ Քրիստոնյա Արևելքի բաժնի վարիչ, պ.գ.դ. Ալեքսան Հակոբյանը, ով ներկայացրեց «Կովկասյան Աղվանքի թագավորությունում քրիստոնեության պաշտոնական ընդունման թվագրման մասին (313-315 թթ.)» թեմայով զեկույցը, ՀՀ ԳԱԱ ԱԻ Իրանի բաժնի վարիչ, պ.գ.թ. Գոհար Իսկանդարյանը «Իրանում ԱՄՆ-ի ռազմավարության գործիքակազմը 1950-60-ական թվականներին» զեկույցով, Չինաստան - Եվրասիա քաղաքական և ռազմավարական հետազոտությունների խորհրդի տնօրեն, ք.գ.թ. Միեր Սահակյանը «Չինաստանը և Թուրքիան փոփոխվող աշխարհակարգում» թեմայով,

ՀՀ ԳԱԱ ԱԻ Թուրքիայի բաժնի վարիչ, պ.գ.թ. Քրիստինե Մելքոնյանը «Խորհրդա-թուրքական հարաբերությունները 1941 թ. (ըստ ՌԴ ԱԳՆ արխիվային փաստաթղթերի)» զեկույցով, և գիտաժողովը եզրափակեց ՀՀ ԳԱԱ ԱԻ Միջազգային հարաբերությունների բաժնի վարիչ, պ.գ.թ. Եվա Հարությունյանի ելույթը «Ճապոնիայի մերձավորարևելյան քաղաքականությունը 2015 թ. անվտանգության օրինագծի ընդունումից հետո» թեմայով:

Գիտաժողովի շրջանակներում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը համագործակցության հուշագրեր ստորագրեց Կոռնելի Կեկելիձեի անվան վրացական ձեռագրերի ազգային կենտրոնի, ՌԴ Կուբանի պետական համալսարանի և ՌԴ Գիտությունների ակադեմիայի Հեռավոր արևելքի ինստիտուտի հետ:

Գիտաժողովը լուսաբանվել է ինչպես տեղի՝ հայկական լրատվամիջոցներում այնպես էլ միջազգային որոշ թերթերում, ինչպիսին է Ստամբուլում լույս տեսնող հայատառ «Մարմարա» քաղաքական հասարակական օրաթերթը (հղում՝ https://www.normarmara.com/arsiv2021-1/240621lu.html):

INTERNATIONAL CONFERENCE DEDICATED TO THE 50TH ANNIVERSARY OF THE ESTABLISHMENT OF THE INSTITUTE OF ORIENTAL STUDIES OF THE NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

Jubilee international conference dedicated to the 50th anniversary of the establishment of the Institute of Oriental Studies of NAS RA took place on June 24, 2021, in the Round Hall of the Presidium of NAS RA, entitled "Contemporary Issues of Oriental Studies" which was organized by the Institute of Oriental Studies of NAS RA.

Attending the conference were leading researchers of the Institute of Oriental Studies of NAS RA, researchers of various analytical centers, specialists of various scientific, educational and research institutions of the RA, such as Director of the Institute of History of NAS RA academician of NAS RA Ashot Melkonyan, Director of the Institute of Archaeology and Ethnography Corresponding member of NAS RA Pavel Avetisyan, former Dean of YSU Faculty of Oriental Studies, Professor Gurgen Melikyan, Director of the Armenian Genocide Museum-Institute, Doctor of Historical Sciences Harutyun Marutyan, Director of Matenadaran, Doctor of Historical Sciences Vahan Ter-Ghevondyan, RA Ambassador to Tunisia Doctor of Historical Sciences Arshak Poladyan, Director of the Cultural centre of the Embassy of IRI Dr. Hosein Tabatabai, Director of the ISEC of NAS RA Dr. Armen Sargsyan and others.

Yuri Suvaryan, Academician-Secretary of Division of Armenology and Social Sciences of NAS RA made the opening speech followed by the greeting speeches of Academician of NAS RA Radik Martirosyan and Director of the Institute of Oriental Studies of NAS RA Candidate of Historical Sciences Robert Ghazaryan.

In his speech Robert Ghazaryan stressed that Armenia is in actuality part of the East, adding that "we are eastern people, so, we must study the East and its people very well". He also emphasized the importance and necessity of establishing contacts with international scientific organizations in

terms of exporting and spreading Armenological approaches to Oriental Studies.

Speeches were made by former directors of the Institute of Oriental Studies of NAS RA Nikolay Hovhannisyan, Corresponding Member of NAS RA, and Ruben Safrastyan, Academician of NAS RA.

During the conference certificates of honor and letters of gratitude from the Institute of Oriental Studies were awarded.

Reports were made by Alexey Maslov - Director of the Institute of the Far Eastern Studies of the Russian Academy of Sciences, Doctor of Historical Sciences, on the topic "Discussions on the paths to the development of Oriental Studies: between classics and innovations", Alexander Skakov - Deputy Director of the Institute of Oriental Studies of the Russian Academy of Sciences, Candidate of Historical Sciences, on the topic "Russian archaeology in the Caucasus at the beginning of the 21st century", Khatuna Gaprindashvili - Senior Researcher at the Korneli Kekelidze Georgian National Centre of Manuscripts, Doctor of Historical Sciences, on the topic "The structure and original part of Armenian Synaxarion", Temir Khagurov – First Vice-Rector of the Kuban State University of RF, Doctor of Social Sciences, on the topic "Youth in a global and local multiethnic society: new perspectives of social tension", Azat Bozoyan - Head of the Department of Eastern Sources and Historiography of the Institute of Oriental Studies of NAS RA, Doctor of Historical Sciences, on the topic "The Armenian Church in the hierarchical system of the Ecumenical Church and the significance of the creation of the Alphabet".

Speeches and reports were also made by Aleksan Hakobyan - Head of the Department of the Christian Orient of the Institute of Oriental Studies of NAS RA, Doctor of Historical Sciences, on the topic "On the dating of the official adoption of Christianity in the kingdom of Caucasian Albania (313-315)", Gohar Iskandaryan - Head of the Department of Iran of the Institute of Oriental Studies of NAS RA, Candidate of Historical Sciences, on the topic "Toolkit of the US strategy in Iran in 1950s-1960s", Mher Sahakyan - Director of “China-Eurasia” Council for Political and Strategic Research,

Candidate of Political Sciences, on the topic "China and Turkey in a changing world order", Christine Melkonyan - Head of the Department of Turkey of the Institute of Oriental Studies of NAS RA, Candidate of Historical Sciences, on the topic "Soviet-Turkish relations in 1941 (based on archival materials of the Ministry of Foreign Affairs of the Russian Federation)", and the conference was concluded by the report of Eva Harutyunyan - Head of the Department of International Relations of the Institute of Oriental Studies of NAS RA, Candidate of Historical Sciences, on the topic "Japan's Middle East policy following the adoption of the Security Bill in 2015".

Within the framework of the conference, the Institute of Oriental Studies of the NAS RA signed memorandums of cooperation with the Korneli Kekelidze Georgian National Centre of Manuscripts, the Kuban State University of the Russian Federation, and the Institute of Far Eastern Studies of the Russian Academy of Sciences.

The conference was covered both in the local Armenian media and in some international newspapers, such as the Istanbul-based socio-political daily newspaper "Marmara" (available at: https://www.normarmara.com/arsiv2021-1/240621lu.html).